ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 767-Ա

ՈՐՈՇՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով, 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Ճամբարակ համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի տեղեկանքը Արմեն Հրաչիկի Մարտիրոսյանի կողմից Ճամբարակ համայնքի բյուջեի նկատմամբ չկատարված հարկային պարտավորությունների վերաբերյալ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքացի Արմեն Հրաչիկի Մարտիրոսյանին /հաշվառված՝ Գեղարքունիքի մարզ, համայնք Ճամբարակ, Չարենցի 22 հասցեում/ սեփականության իրավունքով պատկանող Ճամբարակ համայնքի 05-002-0242-0015 կադաստրային ծածկագրով 0.1951 հա անջրդի վարելահողը, 05-002-0242-0022 կադաստրային ծածկագրով 0.1949 հա անջրդի վարելահողը, 05-002-0241-0018 կադաստրային ծածկագրով 0.1238 հա անջրդի վարելահողը, 05-002-0240-0034 կադաստրային ծածկագրով 0.3021 հա անջրդի վարելահողը, 05-002-0237-0037 կադաստրային ծածկագրով 0.7906 հա անջրդի վարելահողը, 05-002-0248-0015 կադաստրային ծածկագրով 1.195 հա խոտհարքը ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով անշարժ գույքի ընդհամենը՝ 44930 ՀՀ դրամի չափով հարկ վճարելու պարտականությունը չկատարելու փաստի առթիվ հարուցել վարչական վարույթ և իրականացնել քննարկում 2025 թվականի հոկտեմբերի 16-ին ժամը 10:30-ին ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի 125 հասցեում, Ճամբարակի համայնքապետարանի շենքում:
2. Հարուցված վարչական վարույթի մասին եռօրյա ժամկետում ծանուցել Արմեն Մարտիրոսյանին:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրազեկման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ռ. ՕՀԱՆՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 06
ք. Ճամբարակ